

ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալը մասնակցել է Գլաձորի համայնքապետի 2014 թվականի գործունեության վերաբերյալ հաշվետվությանը

19.03.2015



Մարտի 19-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ Սամվել Թարվերոյանը մասնակցել է Գլաձորի համայնքապետ Անդրանիկ Մարտիրոսյանի 2014 թվականի գործունեության վերաբերյալ [հաշվետվությանը](#), որը տեղի է ունեցել գյուղապետարանում: Ներկայացվել է համայնքապետի 2014 թվականի ընթացքում կատարած աշխատանքները, խոսվել է 2015 թվականին իրականացվելիք ծրագրերի մասին:

Նիստին մասնակցել են համայնքի ղեկավարի աշխատակազմը, համայնքի ավագանու անդամներ, համայնքի կրթական և մշակութային հաստատությունների ներկայացուցիչներ, համայնքի բնակիչներ:

Քննարկման ժամանակ բարձրացվել է գյուղի մշակույթի տան հիմնանորոգման, դպրոցի վերանորոգման, կոյուղու և սեփականաշնորհված 5 հա հողատարածքներում ցամաքուրդի կառուցման հարցերը:

Համայնքապետի տարեկան գործունեությունը գնահատվել է բավարար: